

**ԳՈՂԹՆԻ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՑ ՕՔՍՖՈՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ
(Թովմաս Վանանդեցու գործունեությունը Եվրոպայում)**

ՀՏԴ 930

DOI: 10.56246/18294480-2024.17-22

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԶԻՆԱ

**ՀՀ ԳԱԱ պարամության ինստիտուտի ասպիրանտ
Էլփոստ՝ avetisian.zina@gmail.com**

XVII դ. առաջին կեսից գրադարության խոշորագույն կենտրոն դարձած Ամստերդամում 1685թ. հիմնվում է հայկական նոր տպարան՝ Գողթնից սերված Վանանդեցիների ձեռամբ: Գողթնի Ս. Խաչ եկեղեցու եպիսկոպոս Թովմաս Վանանդեցին նոր հիմնված տպարանի ծախսերն հոգալու նպատակով ձեռնարկում է իր ուղևորությունների շարքը դեպի Եվրոպա՝ նվիրահավաքությունների միջոցով գումար հավաքելու ակնկալիքով: Այս ճանապարհին նա իր շրջահայեցությամբ կարողանում է ձեռք բերել համակիրների սովոր խումբ ու դրական կերպար ձևավորել կաթոլիկ երևելիների շրջանում և ձեռք բերել կարևոր հանձնարարական նամակներ, ինչի շնորհիվ կարողանում է անցնել մի երկրից մյուսը և կյանքի կոչել իր առջև դրված նպատակը: Վաստակաշատ եպիսկոպոսի ճանապարհորդությունների վերջին հանգրվանը դառնում է Անգլիան, որտեղ Գողթնի գավառական եպիսկոպոսը 1707թ. մայիսի 29-ին ստանում է Օքսֆորդի համալսարանի աստվածաբանության դոկտորի կոչում: Այնուհետև, վերցնելով Ամստերդամի տպարանում լույս տեսած գրքերից մի քանիսը, ցանկանում է վերադառնալ հայրենիք, սակայն չի հասցնում իրականություն դարձնել իր վերջին ցանկությունը և իր մահկանացուն կնքում է Բելգիայի Անտվերպեն քաղաքում: Սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք հրապարակում եղած փաստագրական նյութի վերլուծության միջոցով նորովի բացահայտել և վերարժևորել Թովմաս Վանանդեցու դերը՝ որպես բարեպաշտ կաթոլիկ, ինչպես նաև խավարի մեջ խարխափող ազգին լուսավորելու նպատակ հեղապնդող պատվախնդիր հայի:

Բանալի բառեր՝ Թովմաս Վանանդեցի, նվիրակություն, հանձնարարական նամակներ, կաթոլիկներ, վանանդեցիների տպարան, Ղուկաս Վանանդեցի, ճամփորդություն, Հավատաստիյուռ ժողով:

XVII դարում Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամը դարձել էր տպագրական գործունեության ծավալման կարևորագույն կենտրոններից մեկը: Հմուտ վարպետների ներկայությունը մի կողմից, հաղորդակցային և կոմերցիոն կապերը

մյուս կողմից, ինչն ապահովում էր երթուղային համակարգի առկայություն ինչպես դեպի Միջերկրական ծովի առափնյա կենտրոններ, այնպես էլ Օսմանյան կայսրության նավահանգստային քաղաքներ, նպաստեցին Ամստերդամի բարգավաճմանը: Եթե այս ամենին գումարենք վաճառականների գործունեության համար բարենպաստ պայմանների առկայությունը, հանդուրժողական վերաբերմունքն ու լիբերալ քաղաքականությունը հալածված փոքրամասնությունների նկատմամբ, ինչպես նաև գրաքննության բացակայությունը, ապա պատկերն ավելի ամբողջական կդառնա: Հենց առավելապես վերջին հանգամանքով պայմանավորված՝ ամստերդամյան իրականությունը հնարավորություն տվեց այն դարձնել տպագրական գործունեության ծավալման բարենպաստ միջավայր¹: Ամստերդամում հայկական տպագրության հիմքերը դրվեցին Մատթեոս Ծարեցու կողմից: Ամստերդամյան հայկական տպարաններն իրենց գործունեությունը շարունակեցին ընդհուպ մինչև 1717թ.՝ հրատարակելով 48 անուն և մոտ 50 հազար օրինակ գիրք²:

Ամստերդամյան հայ տպագրության վերջին նվիրյալները եղան Վանանդեցիները, ովքեր ի սկզբանե ստանձնել էին հայ ժողովրդին լուսավորելու, հայկական ինքնությունը նոր մակարդակի բարձրացնելու նվիրական գործը: 1685 թ. հիմնված տպարանի գործունեության ամենաբեղուն շրջանն սկսվեց այն ժամանակ, երբ տպագրության դեկն իր ձեռքը վերցրեց Թովմաս եպիսկոպոս Վանանդեցին:

Նախիջևանի Գողթն գավառում ծնված, Եվրոպայում հաստատված և օտարության մեջ իր մահկանացուն կնքած վաստակաշատ եպիսկոպոսը դարձավ Եվրոպայի կաթոլիկ գործիչների մտերիմ ու վստահելի անձանցից մեկը և իր գործունյա տեսակով հասավ այնպիսի հաջողությունների, ինչպիսիք, օրինակ, Իսպանիայի Չարլզ II թագավորի (1665–1700), Ավստրիայի Լեոպոլդ կայսեր (1658–1705) և Անգլիայի Աննա թագուհու (1702–1714) հետ հանդիպումներն էին, որոնց արդյունքում նա կարողացավ ստանալ ոչ միայն տպարանի համար խիստ

¹ 1590-ական թվականներից Ամստերդամը վերածվել էր առևտրին և նավագնացությանը վերաբերող աշխատանքների լույս ընծայման կարևորագույն կենտրոնի, որտեղ 1600-ականների սկզբին կային արդեն 20 հրատարակիչներ (մանրամասն տե՛ս **Lesger C.**, The printing press and the rise of the Amsterdam information exchange around 1600, Osaka, 2008, pp. 87-102): 1596-1620 թթ. Ամստերդամում իրենց տպագրությունն են սկսում անգլիացի պուրիտանները (**Sprunger K. L.**, Puritan Printing at Amsterdam, Brill, 1994, pp. 84-124), 1606 թ. լույս է տեսնում Մերկատոր-Հոնդիուս (Mercator-Hondius) ատլասի Ամստերդամյան առաջին հրատարակությունը (**P. D. Krog**t, Amsterdam Atlas Production in 1630s: A Bibliographer's Nightmare, Imago Mundi, 1996, vol. 48, pp. 149-160.), իսկ 1605-1606թթ. եբրայերեն տպագրության հիմքերն է դնում Ջ. Թեունիզը՝ հրատարակելով անգլիացի միսիոներ Հ. Բրայոնի աշխատությունը, որից մոտ քսան տարի անց՝ 1626 թ. հիմնվում է հրեաների առաջին տպարանն Ամստերդամում (**Fuks L.**, Amsterdam: Hebrew Printing, European Judaism: A Journal for New Europe, vol. 5., No. 2, pp. 17-20):

² Հայ գաղթաշխարհի պատմություն. միջնադարից մինչև 1920 թ., **խմբ. Բարխուդարյան Վ., Ավագյան Բ., Թաջիրյան Է.**, Երևան, 2013, էջ 149:

անհրաժեշտ ֆինանսական օժանդակություն, այլ որոշ դեպքերում նաև ստվարացնել իր համակիրների շարքը:

1685թ. իր մորեղբոր որդուն՝ Մաթեոսին Ամստերդամ ուղարկելուց անմիջապես հետո Թովմաս եպիսկոպոսն սկսեց իր ճամփորդությունների շարքը դեպի եվրոպական կաթոլիկ երկրներ, քանզի տպագրական գործունեության ծավալման հաջողությունը պայմանավորում էր առաջին հերթին ֆինանսական գործոնը, ուստի դրա շարունակականության ապահովման համար առաջնահերթ խնդիր էր նյութական միջոցների հայթայթումը: Թովմաս եպիսկոպոսը տարիներ շարունակ դեգերում էր կաթոլիկ Եվրոպայում՝ նվիրակությունների միջոցով գումար հավաքելու նպատակով, որը պետք է ծառայեր նոր հիմնված տպարանի գործունեության ծավալմանն ու ընդլայնմանը: Նրա այդ տեսակ ճամփորդությունները շարունակական բնույթ են կրում իր գործունեության ամբողջ ընթացքում, ինչը հնարավորություն էր տալիս տպագրության կազմակերպման ծախսերն հոգալ ինքնուրույն՝ բացառությամբ երկու դեպքի, մեկը 1699թ. լույս տեսած Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոց, կշռոց, թուոց և դրամից բոլոր աշխարհի»-ն է¹, որը տպվեց ջուղայեցի Պետրոսի խնդրանքով և ծախսով², մյուսը՝ «Պաշտօն Աստուածային»³ աշխատությունը, որը կյանքի կոչվեց խոջա Հովհաննեսի և Հարությունի նյութական աջակցությամբ⁴: Տպագրական գործունեության ծավալման համար անհրաժեշտ գումար, իհարկե, նա կարող էր խնդրել հայ վաճառականներից, սակայն նա ընտրում է այլ՝ ավելի դժվարին, բայց և այնպես ավելի հուսալի ճանապարհ: Սրա պատճառը, ըստ երևույթին, անցյալի դառը փորձն էր, որին բախվել էին և Մատթեոս Ծարեցին, և Ոսկան Երևանցին, իսկ ամենաթարմ հուշը Մաթեոս Վանանդեցու և նրա գործընկերների՝ նորջուղայեցի վաճառական Պողոս Ալեքսանի և երևանցի Հովհաննես քահանայի հետ ունեցած անհաջող դատավարությունն էր, որն իր վերջնական հանգուցալուծումն ստացավ միայն 1699թ. ⁵: Թովմաս Վանանդեցին իր լատիներեն ինքնակենսագրականում, որը նվիրել է Օքսֆորդի Բողլեյան գրադարանին, մի քանի անգամ հիշատակում է Ոսկանին պատահած անհաջողությունները և հիշատակում «կեղծ և նախանձ եղբայրներին», որոնց ձեռքից ինքը տառապել է: «Չորս տարի նրանք ինձ հետապնդում էին դատարանում, որի ընթացքում ես ավելի շատ կորուստներ ունեցա, քան ամբողջ կյանքիս ընթացքում»⁶:

¹ **Ղուկաս Վանանդեցի**, Գանձ չափոց, կշռոց, թուոց և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, 80 էջ:

² **Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա.**, Հայ գիրքը 1512-1800 թթ., Հայ գրքի մատենագրություն, հտ. 1, Երևան, 1988, էջ 131:

³ Պաշտօն Աստուածային, թարգմ. **Ղուկաս Վանանդեցի**, Ամստերդամ, 1704, 184 էջ:

⁴ **Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա.**, նշվ. աշխ., էջ 156:

⁵ **Լեյն Ջ.**, Հայկական գրատպության սփյուռքը, Ամստերդամ-Երևան, 2012, էջ 112:

⁶ Տե՛ս **Aslanian S.**, Early Modernity and Mobility: Port cities and Printers across the Armenian Diaspora, 1512-1800, New Haven & London, 2023, p. 148: Մենք առավելապես օգտվել ենք «Հանդես ամսօրեայ»-

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ նա սկսեց իր ճամփորդությունների շարքը դեպի կաթոլիկ Եվրոպա: Գումար հավաքելու արդյունավետ ճանապարհը XVII դարավերջին կարող էր լինել նվիրահավաքությունը, որի համար նախևառաջ անհրաժեշտ էր թույլտվություն, իսկ թույլտվություն ստանալու համար եպիսկոպոսը պետք է համակիրներ ձեռք բերեր: Այդ համակիրներն, անշուշտ, կաթոլիկ հոգևորականներն էին, որոնց վստահությունը պետք է շահեր վանանդեցի եպիսկոպոսը՝ որպես բարեպաշտ կաթոլիկ:

Հայտնի է, որ Թովմաս Վանանդեցին երկու անգամ է ճամփորդել Եվրոպա (1670-1673թթ., 1678-1708թթ.), երկրորդ անգամ՝ առանց հայրենիք վերադառնալու: Կարելի է ենթադրել, որ նրա առաջին ճամփորդությունը հնարավորություն է տվել նրան հետևություններ կատարել և հող նախապատրաստել իր հետագա գործունեության համար: Այս համատեքստում խիստ հետաքրքրական է Ոսկան Երևանցու դիպվածը՝ կաթոլիկ այրերի առնչությամբ: Նա ևս, հավատարիմ էր մնում գործող ընթացակարգին, այն է՝ հանձնարարական նամակների ձեռք բերմանը և դրանց կիրառմանը՝ իր վստահելի անձ լինելու հանգամանքը ապացուցելու համար, քանզի «հանձնարարական նամակները առանցքային «թղթե գործիքներ» էին»¹: Այսպես, երբ Ոսկան վարդապետ Երևանցին 1663թ. առաջին անգամ մեկնում է Հռոմ՝ հայերեն Աստվածաշունչ տպագրելու նպատակով, Հավատասփյուռ ժողովի (Congregation de Propaganda Fide) կարդինալներին է ներկայացնում հանձնարարական նամակ՝ տրված Պողոս Պիրոմալիի կողմից և կնքված պաշտոնական կնիքով: Այն վկայում էր նրա անբասիրությունը՝ որպես կաթոլիկություն ընդունած և Սուրբ աթոռի վստահելի անձ²: Ուստի Թովմաս եպիսկոպոսը, ծանոթ լինելով այս ամենին, իր երկրորդ ճամփորդությունն սկսել է հստակ ուղեգծով և ժամանակի հրամայականի խորը գիտակցմամբ: Եվ այդ ճանապարհին նրա առաջին քայլը Թիֆլիսի Կարմելյաններից հանձնարարական նամակների ձեռք բերումն էր՝ ուղղված Հավատասփյուռ ժողովին³: Մեկ տարի Վրաստանում մնալուց և նամակները ստանալուց հետո նա 1679թ. հունիսին Վիեննայում էր, այնուհետև Վենետիկում, իսկ 1681թ. սեպտեմբերին՝ Հռոմում՝ զինված նոր նամակներով: Իր զարմիկներին՝ Ղուկասին և Միքայելին Ուրբանյան վարժարան (Urbanium Collegium) տեղավորելուց հետո նա մեկնում է Նեապոլ, այնուհետև Մարսել: Մարսելից նա մեկնում է Իսպանիա՝ այստեղ

ում լույս տեսած լատիներեն տարբերակից, որը հրատարակել է **Մ. Տեր-Գրիգորյանը**, Նոր նիւթեր և դիտողություններ հրատարակիչ Վանանդեցուց մասին, «Հանսէս ամսօրեայ», 1966 No 7-9, էջ 315-317:

¹ Տե՛ս **Aslanian S.**, նշվ. աշխ., էջ 77:

² **Նույն տեղում**, էջ 165:

³ **Նույն տեղում**, էջ 177:

նվիրահավաքություններ անելով ավելի քան տասը տարի, իսկ ավելի ուշ նա նույն առաքելությամբ լինում է Վիեննայում, Բելգիայում և կրկին Իսպանիայում¹:

Թովմաս Վանանդեցին կաթոլիկներին չի հայտնում իր գումար հավաքելու բուն նպատակը՝ հավանաբար զգուշանալով նրանց գրաքննությունից և դարձյալ մտավախություններ ունենալով Ոսկան Երևանցուն պատահած դեպքերի առնչությամբ: Սակայն միամտություն է կարծելը, որ կաթոլիկներն անտեղյակ էին հայ եպիսկոպոսի գործունեությանը, մանավանդ լավ զարգացած կաթոլիկական ցանցի պարագայում, որով ողողված էր ամբողջ Եվրոպան և որսում էր ցանկացած մանր ու մեծ դիպված: Այսպես, 1693թ. Կոմպոստելայի Անտոն արքեպիսկոպոսը նամակ է հղում Իննոկենտիոս XII (1691-1700) պապին, որում նշում է, որ իր գույքը շարժել է այն, որ Սուրբ Խաչ վանքի եպիսկոպոս Թովմասը դրամ է հավաքում եկեղեցի կառուցելու և իր եղբորը գերությունից ազատելու համար, և ինքը հրաման է տվել, որ գավառի մեջ գումար հավաքի, բայց նա հրամանագիր ցույց չի տվել: «Այս բոլորը գրեցի Սրբոթեանդ,– ավելացնում է արքեպիսկոպոսը,– որպեսզի երբ իր մասին լուր մը հասնի Հռոմ՝ չըսուի թե կանուխ էն չգրեցի Ձեզի: Ինքը ծրագիր ունի քիչ ատենն անցնելու ուրիշ քաղաք, որ կը կոչուի Corugna (Կորունյա – Ձ. Ա.)»²:

Նույնիսկ այն նույն Ներսես վարդապետը, որն օգնեց Թովմասին և նրան ներկայացրեց շատ հեղինակավոր անձանց, այդ թվում նաև Լեոպոլդ կայսերը, ինչի շնորհիվ Թովմաս եպիսկոպոսը Վիեննայում ապրեց և աշխատեց վեց ամիս և գումար հավաքած վերադարձավ Ամստերդամ, Վիեննայի առաքելական նվիրակի հետ միասին քննության են առնում և այնուհետև Հռոմ են ուղարկում Վանանդեցիների հրատարակած Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»³ վկայելով, որ գիրքը վնասակար բան չի պարունակում, բայց ոչ էլ օգտակարություն ունի, քանի որ այնտեղ խոսվում է միայն հայ իշխանների պատմության մասին⁴:

1697թ. օգոստոսի 31-ին Թովմաս Վանանդեցին հերթական և վերջին աղերսագիրն է հղում Հավատաստիյու ժողովին: Աղերսագրում եպիսկոպոսը հաղորդում է, որ ֆինանսական խնդիրների պատճառով չի կարողանում ավարտին հասցնել նոր գրքի տպագրությունը և ավելացնում է. «...ես առանց վճարելու չեմ կարող գործը ավարտել, և որով չեմ կարող իրագործել ՀՍ. ի ծրագիրը, այն է՝ շարունակել ճամբաս դեպի Մեծ Հայք իմ թեմա», ապա հավելում է, որ վկայականների կարիք ունի՝ հանգանակություն կազմակերպելու համար⁵:

¹ Թովմաս Վանանդեցու շարժի մասին մանրամասն տե՛ս **Ճեմճեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 183-196, **S. Aslanian**, նշվ. աշխ., էջ 177-183:

² Տե՛ս **Ճեմճեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 193:

³ **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Ամստերդամ, 1695, 487 էջ:

⁴ **Ճեմճեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 195:

⁵ **Ճեմճեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 195:

Իրոք, ի՞նչ ծրագրի մասին է խոսքը: Կարելի է ենթադրել, որ կաթոլիկ եկեղեցին Թովմաս Վանանդեցու այս տեսակ խնդրանքները բավարարում էր՝ աչքի տակ ունենալով այն հնարավորությունը, որ նա շուտով կվերադառնա հայրենիք և իր նպաստը կբերի կաթոլիկ եկեղեցուն որպես ջերմեռանդ կաթոլիկ: Հարկավ, պետք է նշենք, որ կաթոլիկ եկեղեցին արևելյան ազգերի նկատմամբ նման գործելակերպ էր որդեգրել ի սկզբանե¹:

Վերոհիշյալ աղերսագիրը ներկայացվում է Հավատաստիյու ժողովի քննարկմանը 1697թ. սեպտեմբերի 16-ի նիստին², սակայն պատասխանի մասին որևէ տեղեկություն չկա, թեև, դատելով քննարկման բովանդակությունից, կարելի է ենթադրել, որ այն մերժվել է: Այստեղ առավել քան հետաքրքրական է այն հանգամանքը, որ 1697թ. մարտին վանանդեցի եպիսկոպոսը ժամանում է Վիեննա՝ իր հետ բերելով լեհահայ կաթոլիկ տեսաբանի նամակը՝ ուղղված Ներսես վարդապետին, որը Լեոպոլդ կայսեր մոտ մասնավոր և Սուրբ Ստեփանոս տաճարի հոգևորական էր: Նամակում վերջինիս խնդրում էին, որ Թովմաս Վանանդեցուն ներկայացնի Վիեննայի մեծամեծերին և կայսրին: Ներսես վարդապետն ընդառաջում է հայ եպիսկոպոսին և նրան ներկայացնում կայսերը, ինչի արդյունքում նա Վիեննայում է մնում վեց ամիս, պատարագում, գումար հավաքում և նոր նամակներով զինված, որոնցից մեկը Լեոպոլդ կայսրից, մյուսը Ավստրիայի եպիսկոպոսից, 1697թ. վերջին վերադառնում է Ամստերդամ³: Ստացվում է, որ նա Հավատաստիյու ժողովին նամակն ուղարկում է հենց Վիեննայից և Վիեննայում գումար հավաքելու ընթացում զուգահեռ մտածում ֆինանսական այլ աղբյուրների ձեռքբերման մասին:

Թովմաս Վանանդեցու ճամփորդություններից ամենավերջինը Անգլիա կատարածն էր: Իր լատիներեն ինքնակենսագրականում եպիսկոպոսը գրում է, որ «կեղծ և նախանձ» եղբայրների ձեռքից պարտքերի տակ ընկնելու պատճառով նա որոշում է 1698-ին մի քանի հարյուր գիրք ուղարկել Հայաստան, որոնց գումարով կվճարեր պարտքը, իսկ մնացած գրքերով ու տպագրական գործիքներով ճանապարհ կընկներ հայրենիք այդքան մեծ դժվարություններից հետո: Սակայն նրա գրքերը ճանապարհին անհետանում են և Հայաստան չեն հասնում, և այդ «կիսամեռ դարաշրջանում» նա ստիպված է լինում 1706թ. գնալ Լոնդոն՝ իր բեռը թեթևացնելու համար⁴: Թովմաս եպիսկոպոսը Ղուկաս Վանանդեցու ուղեկցությամբ 1706թ. նոյեմբերին ժամանում է Անգլիա՝ իր հետ վերցնելով Ամստերդամի Անգլիական եպիսկոպոսական եկեղեցու հովիվ Քյոքբերնի հատուկ հանձնարարականը, որում նա

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Frazer Ch.**, Catholics and sultans: The church and the Ottoman Empire 1453-1923, Cambridge University Press, 1983.

² **Ճեմճեմյան Ա.**, նշվ. աշխ., էջ 195:

³ **Aslanian S.**, նշվ. աշխ., էջ 183:

⁴ **Aslanian S.**, նշվ. աշխ., էջ 184, հմմտ. **Տեր-Գրիգորեան Մ.**, նշվ. աշխ., «Հանդես ամսօրեայ», No 7-9, էջ 316:

նշում է, որ ծանոթ է Թովաս Եպիսկոպոսի տպագրական գործունեությանը և հավելում, որ Եպիսկոպոսի նպատակն է հայրենիք վերադառնալ և իր հետ տանել տպարանն ու հրատարակած գրքերը և աջակցություն է խնդրում իր բարեսիրական ծրագիրն առաջ տանելու համար¹:

Այստեղ խիստ հետաքրքրական է, որ Սուրբ Խաչի Եպիսկոպոս Թովմաս Վանանդեցին արժանանում է մեծամեծ նվերների և նույնիսկ Օքսֆորդի համալսարանի Աստվածաբանության դոկտորի կոչման: Նրա Օքսֆորդ կատարած այցելության և նրան նվիրված միջոցառման մասին Բողլեյան գրադարանի տարեգրությունում նշվում է. «Անցած գիշեր (1707թ. մայիսի 23) Օքսֆորդ եկավ մի հայ Եպիսկոպոս: Նա Մեծ Հայքի Գողթնի Սուրբ Խաչի Եպիսկոպոսն է»²: Ապա հավելվում է, «**Մայիսի 29-ին Օքսֆորդի թատրոնում ընդունելություն կազմակերպվեց, որտեղ Գողթնի Ս. Խաչի արքեպիսկոպոսն ստացավ Աստվածաբանության դոկտորի, իսկ նրա զարմիկ Ղուկաս Նուրիջանյանը (Luke Nurigian) և Քյոքբերնի որդին՝ Արվեստի մագիստրոսի կոչում**»³:

Օքսֆորդի համալսարանի շրջանավարտների կատալոգում ևս հանդիպում ենք նրանց անուններին և կոչում ստանալու թվականին: Այստեղ Ղուկաս Վանանդեցին հիշատակված է որպես Մեծ Հայքի Գողթնի Սուրբ Խաչ եկեղեցու արքեպիսկոպոսի եղբորորդի (Nurigian (Lukas. Archiep Santae Crucis, in Goctan in Armenia majori Nepos))⁴, իսկ Պատրիկ Քյոքբերնը՝ արքեպիսկոպոսի թարգմանիչ (Cockburn (Patricius, Archiep Santae in Gocthan in Armenia majori Interpres))⁵: Իսկ ինչ վերաբերում է Թովմաս Վանանդեցուն, ապա նրա անվան փոխարեն պարզապես գրված է «Վարդապետ» (Wardapiet (Tho. Archiep. Santae Crucis in Armenia Majori))⁶:

Աստվածաբանության դոկտորի կոչում ստանալու փաստին զուգահեռ խիստ հետաքրքրական է նաև այն, թե ինչու բարեպաշտ կաթոլիկն իր հայացքն ուղղեց բողոքական Անգլիայի կողմը: Կարելի է ընդունելի համարել Մ. Տեր-Գրիգորյանի այն դիտարկումը, որ «հեզ Եպիսկոպոսը այլևս վաստակաբեկ ու ծանծրացեալ շրջապատյոյտներէ և նուիրահաւաքութիւններէ, կը մտադրէ վերջին ճիգերովը նիւթական կարևոր նպաստ մը ապահովել Անգլիայէն»⁷, կամ էլ գուցե Եպիսկոպոսի համար այլևս սպառված էին գումար հայթայթելու նախկին ճանապարհները: Եպիսկոպոսի՝ մեզ հայտնի վերջին ճամփորդությանը (1702թ.) հաջորդում է ևս չորս

¹ **Նույն տեղում:**

² St'u Annals of Bodleian library Oxford with a Notice of the earlier library of the University by **W. Dunn Macray**, Oxford, Clarendon Press, 1890, p. 177.

³ **Տե՛ս նույն տեղում:**

⁴ A Catalogue of all Graduates in Divinity, Law, Medicine, Arts and Music the University of Oxford between October 10, 1651 and December 31 1850, Oxford University press, 1851, p. 486.

⁵ **Նույն տեղում**, էջ 136:

⁶ A Catalogue of all Graduates in Divinity, Law, Medicine, Arts and Music the University of Oxford, p. 695.

⁷ Տե՛ս **Տեր-Գրիգորեան Մ.**, նշվ. աշխ., «Հանդես ամսօրեայ», 1966, No 4-6, էջ 171:

գրքի տպագրություն, իսկ 1705թ. սկիզբ առած ամլության շրջանն հուշում է, որ ժամանակն էր այլ ուղիների որոնման մասին մտածել:

Թովմաս Վանանդեցին իր լատիներեն ինքնակենսագրական ակնարկը գրում և նվիրում է Բողեյան գրադարանին: Այս փաստի ի հայտ գալը լույս է սփռում նախկինում մեզ մտահոգող այն հարցադրմանը, թե ինչու էր նա խնամքով թաքցնում իր՝ կաթոլիկ երևելիների հետ ունեցած կապը, նույնիսկ այն հանգամանքը, որ իր զարմիկները կրթություն են ստացել Ուրբանյան վարժարանում: Նրան պարզապես ձեռնտու չէր, որ Անգլիայում տեղյակ լինեին իր՝ նախկինում ծավալած գործունեությանը, այն, որ նա կաթոլիկ ծեսով պատարագել է շուրջ 30 տարի և այդ եղանակով է ապահովել տպարանի գոյությունը: Բացի դրանից՝ նա շրջանցում է նաև այն փաստը, որ մի քանի գրքեր տպագրել է նորջուղայեցի վաճառականների աջակցությամբ և նշում է, որ հրատարակել է քարտեզ և 13 գիրք՝ իր միջոցներով¹:

Փաստերի համադրումը և Թովմաս Եպիսկոպոսի ինքնակենսագրականի ամբողջական բովանդակության հերմենևտիկ վերլուծությունը թույլ են տալիս ենթադրել, որ դա մանիպուլյատիվ հնարք էր: Նրա ինքնակենսագրականում կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ նրան տարիներ շարունակ մտահոգել է այն, թե ինչպես լուսավորություն տարածի հայկական միջավայրում՝ Հայաստանում բարձրագույն կրթության օջախ հիմնելով, և թե ինչպես է տարիներ շարունակ մենմենակ, առանց որևէ օգնության կազմակերպել տպագրությունը, իսկ հիմա հանդիպել է խոչընդոտների, և դրանք հաղթահարելու համար մեկնել է Անգլիա:

Պատմաբան Սեպուհ Ասլանյանի վերջին աշխատությունից հայտնի է դառնում, որ նմանատիպ մի գրություն (Memorial) էլ նա գրել է 1692թ.¹ ուղղված Իսպանիայի Չարլզ II թագավորին, որը տպագրվել է Մադրիդում²:

Այնտեղ նա Չարլզ II թագավորին գրում է. «Իմանալով խնդրի կարևորությունը, ինչպես նաև արքեպիսկոպոսի արդար նպատակը, կաթոլիկ քրիստոնյա առաջնորդները, թագավորները և իշխանները տվել են իրեն անձնագրեր, կրեդիտներ (վարկեր), հանձնարարական նամակներ, որոնք հաստատել և մանրամասնել են իր մտադրությունները և նշված են ներքևում»³:

Այսպես, այս դեպքում մենք գործ ունենք այնպիսի Թովմասի հետ, որը շուրջ 30 տարի մենմենակ, առանց որևէ օգնության, սեփական միջոցներով տպագրությամբ է զբաղվել իր հայրենակիցներին լուսավորելու համար և անելանելի վիճակում գտնվելով՝ ուրիշ հենարան չունի, մյուս դեպքում գործ ունենք ինքնավստահ կաթոլիկ գործչի, որը վայելում է կաթոլիկ քրիստոնյա առաջնորդների վստահությունը: Սա, ըստ երևույթին, պայմանավորված է այն իրավիճակով, որում հայտնվել էին եպիսկոպոսն ու տպարանը այս երկու տարբեր շրջափուլերում: 1690-ականների

¹ Տեր-Գրիգորեան Մ., նշվ. աշխ., «Հանդես ամսօրեայ», 1966, No 7-9, էջ 316:

² Aslanian S., նշվ. աշխ., էջ 178:

³ Տե՛ս Aslanian S., նշվ. աշխ., էջ 180:

սկիզբը կարելի է համարել Թովմաս եպիսկոպոսի գործունեության ամենաբեղուն շրջանը նվիրահավաքությունների տեսանկյունից, որին հաջորդում են տպարանի շոնդալից հաջողությունները՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և «Համատարած աշխարհացոյցի»¹ հրատարակությունները:

Անգլիա ճանապարհորդությունը տևում է մինչև 1707թ. մայիս, դրանից հետո Ղուկաս Վանանդեցին, վերցնելով Անգլիայի Աննա թագուհու տրամադրած ֆինանսական օժանդակությունը, վերադառնում է Ամստերդամ՝ տպագրությունը շարունակելու համար, իսկ Թովմասը մնում է Անգլիայում՝ ըստ Մ. Տեր-Գրիգորյանի՝ «նոր նպաստներ հավաքելու ակնկալիքով»²: Սակայն այստեղ հարցական է մնում, թե ինչու Թովմասը եպիսկոպոսը Ղուկաս Վանանդեցու հետ շատ արագ չդիմեցին Ամստերդամ՝ հայրենիք վերադառնալու համար, եթե այդ նպատակադրմամբ էին Անգլիայի թագուհուց գումար խնդրել և ստացել որոշ դրամական միջոցներ «some assistance»³: Թե ինչպիսի ներքին պայմանավորվածություն էր եղել Թովմաս և Ղուկաս Վանանդեցիների միջև, և ինչ պատճառով էր վանանդեցիների տպարանը շուրջ չորս տարի անգործության մատնված մնում, մեր տրամադրության տակ եղած նյութերը այս հարցի պատասխանը չեն տալիս:

Թովմաս Վանանդեցին մահանում է Բելգիայի Անտվերպեն քաղաքում՝ հայրենիք վերադառնալու ճանապարհին: Նրան թաղում են 1708թ. սեպտեմբերի 10-ին Անտվերպենի Սուրբ Աստվածամոր տաճարի (A Notre-Dame in Antwerpen) մեծ խորանի ստորին մասում⁴, որտեղ «կապտագոյն տապանաքարի տակ նրանից շատ առաջ, այն է՝ 1590-ին, մի ուրիշ եպիսկոպոս է եղել թաղուած, որի տապանագիրն է՝ D. O. M. Monumentum Huguini Hiberini Archiepiscopi Thuamensis, obiit nonis Augusti M.D.X.C.»⁵: («Թուամի⁶ արքեպիսկոպոս Հուգին Հիբերինի հուշարձանը, մահացել է 1590թ. օգոստոսի 9-ին»):

Այսպիսով, ամփոփելով Թովմաս եպիսկոպոս Վանանդեցու գործունեությանը նվիրված աշխատանքը, մեկ անգամ ևս պետք է փաստենք, որ վաստակաշատ եպիսկոպոսը շուրջ 30 տարի դեգերել է օտարության մեջ՝ դրամական միջոցներ հավաքելու և Ամստերդամում գործող տպարանը կանգուն պահելու համար:

Հետաքրքրական է, որ Թովմաս եպիսկոպոսը հաջողեցրեց այն, ինչը չկարողացավ Ոսկան Երևանցին: Ակներև է, որ նա կարողացավ և՛ շրջանցել կաթոլիկ եկեղեցու գրաքննությունն ու թշնամանքն առ այն, որ նա գրքեր էր տպագրում

¹ Համատարած աշխարհացոյց, Մեծ, Ամստերդամ, 1695:

² Տեր-Գրիգորյան Մ., նշվ. աշխ., «Հանդես ամսօրեայ», 1966, No 4-6, էջ 178:

³ Annals of Bodleian library, p. 176.

⁴ Vannérus J., Note sur une imprimerie arménienne établie à Amsterdam en 1695, **Bruxelles 1906, p. 299.**

⁵ Սարուխան, Բելգիա և հայերը, Վիեննա, 1937, էջ 136:

⁶ Քաղաք արևմտյան Իռլանդիայում:

«հերձվածող» Հոլանդիայում, և՛ հաղթահարել ֆինանսական դժվարությունները, և՛ մեղմել «եղբայրների չարությունն ու նախանձը»՝ ի կատար ածելով իր առջև դրված դժվարին խնդիրը, այն է՝ կանգուն պահել տպարանն ու առաջ տանել տպագրական գործը:

Նա կարողացավ անել անհնարինը և իր անձը մի կողմ դնելով՝ իր կյանքի առաջնահերթ խնդիր դարձրեց հայկական տպագրության շարունակականության ապահովումը, որը հետապնդում էր հայ ազգին կրթելու վեհ նպատակ, ինչն, անշուշտ, արժանի է նորովի վերագնահատման և վերաթևորման:

Օգտագործված գրականության ցանկի ցանկ

1. Ամատունի Կ., Ոսկան վրդ. Երեանցի եւ իր ժամանակը, Վենետիկ, 1975, 355 էջ:
2. Հայ գաղթաշխարհի պատմություն. միջնադարից մինչև 1920 թ., խմբ. Վ. Բարխուդարյան, Ք. Ավագյան, Է. Թաջիրյան, Երևան, 2013, 371 էջ:
3. Լեյն Զ., Հայկական գրատպության սփյուռքը, Ամստերդամ-Երևան, 2012, 219 էջ:
4. Ճեմճեմյան Ս., Հայ տպագրութիւն և Հոռմ (ԺԷ դար), Վենետիկ, 1989, 207 էջ:
5. Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Հայ գրքի մատենագիտություն, հ. 1, Երևան, 1988, 864 էջ:
6. Տեր-Գրիգորեան Մ., Նորահայտ նիթեր և դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին, «Հանդէս ամսօրեայ», 1966, No 4-6, էջ 172-184, N 7-9, էջ 309-322:
7. Սարուխան Ա., Բելգիա և հայերը, Վիեննա, 1937, 253 էջ:
8. Սեպուհ Ասլանեան, Յանձնարարական նամակներ, ցանցեր և շարժունակութիւն Թովմաս Վանանդեցիին կեանքին մէջ (1677-1707), «Հանդէս ամսօրեայ», 2018, N 1-12, էջ 105-158:
9. Annals of Bodleian library Oxford with a Notice of the earlier library of the University by W. Dunn Macray, Oxford, Clarendon Press, 1890, 545 p.
10. Aslanian S., Early modernity and mobility: Port cities and printers across the Armenian Diaspora, 1512-1800, Yale University press, New Haven & London, 2023, 557p.
11. A Catalogue of all Graduates in Divinity, Law, Medicine, Arts and Music the University of Oxford between October 10, 1651 and December 31 1850, Oxford University press, 1851, 808 p.
12. Krogt P.D., Amsterdam Atlas Production in 1630s: A Bibliographer's Nightmare, Imago Mundi, 1996, vol. 48, pp. 149-160.

13. Frazee Ch. 1983, Catholics and Sultans, Cambridge University press, 388 p.
14. Fuks L., Amsterdam: Hebrew Printing, European Judaism: A Journal for New Europe, vol 5., No. 2, pp. 17-20.
15. Vannérus J., 1906, Note sur une imprimerie arménienne établie à Amsterdam en 1695, **Bruxelles**, pp. 299-308.
16. Lesger C., The printing press and the rise of the Amsterdam information exchange around 1600, Osaka, 2008, pp. 87-102.
17. Sprunger K. L., Puritan Printing at Amsterdam, Brill, 1994, pp. 84-124.

**FROM THE PROVINCIAL BISHOP OF GOGHTN TO A DOCTOR OF THEOLOGY
OF OXFORD UNIVERSITY
(The activity of Tovmas Vanandetsi in Europe)**

AVETISYAN ZINA

PhD student of NASRA

e-mail: avetisian.zina@gmail.com

At the beginning of the XVIIth century, Amsterdam had become enormous center of printing press industry. In 1685, new Armenian printing press was established by Vanandetsi from Goghtn in Amsterdam. Tovmas Vanandetsi, the bishop of St. Khach of Goghtn, to cover the costs of the newly established printing press, undertook his trips to Europe hoping to collect money through donations. In this way, owing to his prudence, he was able to form a big group of supporters and a positive image among the Catholic figures and obtain significant recommendation letters. Thanks to those letters he was able to move from one country to another to reach his goal.

The last destination of the journey of the outstanding bishop was England, where the provincial bishop of Goghtn was awarded the degree of Doctor of Theology at Oxford University. Then, taking some books published in the Amsterdam printing house, Tovmas Vanandetsi tries to return to his homeland, but he does not manage to fulfill his last wish, as he dies in the Belgian city of Antwerp.

In this article, we tried to reveal and reevaluate the role of Tovmas Vanandetsi as a pious Catholic and a dignified Armenian who strives to enlighten his people living in darkness.

Keywords: Tovmas Vanandetsi, donation, recommendation letter, the catholics, printing press by Vanandetsi, Lukas Vanandetsi, trips, Faith Propaganda.

ОТ ПРОВИНЦИАЛЬНОГО ЕПИСКОПА ГОХТНА ДО ДОКТОРА БОГОСЛОВИЯ ОКСФОРДСКОГО УНИВЕРСИТЕТА: ДЕЯТЕЛЬНОСТЬ ТОВМАСА ВАНАНДЕЦИ В ЕВРОПЕ

АВETИСЯН ЗИНА

Аспирант института Истории НАН РА
электронная почта: avetisian.zina@gmail.com

В Амстердаме, который с первой половины XVII века стал крупнейшим центром книгопечатания, в 1685 году была основана новая армянская типография под предпринимательством Ванандийцев из Гохтна. Товмас Ванандеци, епископ церкви Святого Креста в Гохтне, предпринимает ряд поездок в Европу в надежде собрать как можно больше пожертвований, с целью покрытия расходов на новую типографию.

Благодаря своей осмотрительности он смог собрать большой круг единомышленников и стать положительным образом в высших кругах католиков, а также приобрел важные рекомендательные письма, которые помогали ему переезжать из одной страны в другую и достичь своих целей. Последней вехой в путешествиях выдающегося епископа становится Англия, где 29 мая 1707 года провинциальный епископ Гохтна получает степень доктора богословия Оксфордского университета. Затем, взяв несколько книг, опубликованных в Амстердамской типографии, Товмас Ванандецы пытается вернуться на родину, однако ему не удаётся осуществить свое последнее желание, он умирает в бельгийском городе Антверпене.

В данной статье мы попытались путем анализа всех известных фактов, по-новому раскрыть и переоценить роль Товмаса Ванандеци как благочестивого католика, а также честлюбивого армянина, стремящегося просветить свой народ, живущего в тьме.

Ключевые слова: *Товмас Ванандеци, пожертвование, рекомендательные письма, католики, типография Ванандцев, Лукас Ванандецы, путешествие, конгрегация распространения веры.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 28.09.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 11.10.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: